ԴԱԳԻԿ Ա-Ի ՊԱՅՔԱՐԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

X դ. կեսերից սկսվեց Բագրատունյաց Հայաստանի պատմության երկրորդ շրջանը (961—1045), որը մի շարք էական կողմերով տարբերվում էր նախորդից (885—960)։ 961 թ. մշտական մայրաքաղաքի հարցը լուծելուց և Անիում հաստատվելուց հետո արքունիքը ձեռնամուխ եղավ վերափոխումների լայն ծրագրի իրագործման, նպատակ ունենալով ամրապնդել թագավորական իշխանությունը, ստեղծել ճկուն վարչական ապարատ, արքունի գործակալությունների և վարչական ապարատի մյուս օղակների միջոցով կենտրոնական իշխանության հետ ամուր կապել երկրի տարբեր մարզերը (որոնք հաճախ առանձին ֆեոդալներին պատկանող գավառներ էին) և առավելապես ծայրամասերը։ Այդ ուղղությամբ կարևոր քայլեր կատարեց Աշոտ Գ-ն (953—977)։ Դրանցից մասնավորապես հիշատակելի են վերափոխումները Տաշիր-Զորագետում և գահակցության ինստիտուտի կիրառումը[1]։

Վերափոխումները և երկրի ներքին դրության ամրապնդման քաղաքականությունը շարունակեցին Աշոտի հաջորդները՝ Սմբատ Տիեզերակալը (977—990) և հատկապես Գագիկ Ա-ն (990—1020), որի թագավորության տարիները համարվում են Բագրատունյաց պետության առավել հզոր շրջանը[2]։

Գագիկի ներքին քաղաքականության կարևոր ու հետաքրքիր կողմերից մեկն էր նրա պայքարը ֆեոդալական անջատողականության դեմ։ Մասնագիտական գրականության մեջ մասնավորապես քննվել է Տաշիր-Զորոփորում իշխող Դավիթ Կյուրիկյանի 1001 թ. ըմբոստացումը Գագիկ Ա-ի դեմ, որը վերջացել էր Դավթի պարտությամբ և նրա հողերի մասնակի բռնագրավումով[3]։ Ֆեոդալների նմանօրինակ կենտրոնախույս ձգտումները ճնշելու համար արքունիքը հենարան է դարձնում նոր իշխանական տները։ Այսպես, օրինակ, Սմբատ Բ-ի և Գագիկ Ա-ի ժամանակ սկսում է բարձրանալ Պահլավունիների նոր շառավիղը, որը դառնում է Բագրատունիների հավատարիմ վասալը և վարում սպարապետության գործակալությունը։ Սրանց է հանձնվում Կյուրիկյաններից խլված Աղստևի լեռնահովիտը (հին Զորոփոր գավառը) Կայան և Կայծոն բերդերով[4]։

---

1 Այդ վերափոխումների մասին մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 3 և 1977, № 1։

2 Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 606, Հ. Հարությունյան, Հայաստանը 9—11-րդ դդ., Երևան, 1959, էջ 125—126, «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 134, 138—139։

3 Լեո, նշվ. աշխ., էջ 613—614, Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 119, Ռ. Մաթևոսյան, Արևելյան Գուգարքը XI դ. առաջին կեսին («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 116—117)։

4 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 99, Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 271։

Անջատողականության դեմ պայքարի առումով ուշագրավ են Գագիկի փոխհարաբերությունները Կարսի Բագրատունիների հետ։ Բագրատունյաց Կարսի[5] (Վանանդի) կրտսեր ճյուղը առաջ էր եկել 961 թ., հայոց մայրաքաղաքը Կարսից Անի տեղափոխելուց հետո։ Տեղում կառավարիչ էր մնացել Աշոտ Գ-ի եղբայր Մուշեղը, որին շահնշահը ճանաչել էր թագավոր (961—984)։ Պատմագիտության մեջ ընդունված կարծիքով Մուշեղի հիմնած տոհմաճյուղը Կարսում իշխել է մինչև տեղական թագավորության անկումը՝ 1065 թ.։ Բայց աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Մուշեղի տոհմաճյուղը Վանանդում երկար չի իշխել և XI դ. սկզբին նրան փոխարինել է նոր շառավիղ։

Կարսում երկրորդը թագավորեց Մուշեղի որդի Աբասը։ Բոլոր պատմաբանները նրա իշխանության տարիները համարում են 984—1029 թթ., սակայն դա ակնհայտ սխալ է։ Աբասը Ասողիկի վկայությամբ իշխել է ընդամենը 6 տարի[6]։ Նույն ժամանակահատվածն է նշված նաև 939 թ. հիմնված Կամրջաձորի ս. Նշան վանքի «Պատմութիւն»-ում[7]։ Այսպիսով, Աբաս Ա Կարսեցու թագավորության ճիշտ տարիներն են 984—990 թթ.։ Նրան հաջորդել է Գագիկ անունով որդին. «Եւ յետ մահուանն Աբասայ թագաւորացուցին զԳագիկ որդի նորա՝ մանուկ գոլով վեցամեայ»[8]։ Վեցամյա Գագիկը՝ Մուշեղի թոռը, հիշատակվում է միայն Կամրջաձորի հիշյալ աղբյուրում և թերևս այդ պատճառով դուրս է մնացել պատմաբանների տեսադաշտից։ Ցավոք, նրա իշխանության տևողությունը նույն աղբյուրում չի նշված և հայտնի չէ[9]։ Սրան մենք անվանում ենք Գագիկ Ա Կարսեցի, ի տարբերություն X—XI դդ. մյուս գահակալների, որոնք նույնպես Գագիկ անունն են կրել։

---

5 V դ. Վանանդի բերդերից էր Կարնենյացը (Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 12), որը Ն. Ակինյանի կարծիքով նույն Կարոն է («Հանդէս ամսօրյա», 1947, № 10—12, էջ 509)։

6 «Ցայսմ ժամանակի, ի ՆԼԳ (984) թուականին Մուշեղ թագաւորն մայրաքաղաքին Կարուց վախճանի, և փոխանակ նորա թագաւորէ Աբաս որդի նորա ամս զ» («Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 196)։

7 «Եւ յետ Սմբատայ Մուշեղ հօրեղբայր նորա թագաւորեալ ինն ամ, և սա մեռանի. և յետ սորա Աբաս թագաւորեալ ամս վեց, սա շինեաց զվանքն Շիրմաց, և մայր սորա շինեաց զվանքն Կուսանաց՝ զԹրին» (Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 175)։ . .

8 Նույն տեղում։

9 Ասողիկը գրում է (էջ 277), որ 1000 թ. Աբաս Կարսեցին հանդիպել է Վասիլ կայսեր հետ, որը եկել էր Հայաստան։ Մեր կարծիքով տեղի է ունեցել անձերի շփոթություն։ Կայսրին ներկայացողը պետք է լիներ ոչ թե Աբասը, այլ վերջինիս որդի Գագիկը։ Դա հաստատվում է մի քանի կովաններով։ Ըստ Ասողիկի Կարսի թագավորը 1000 թ. շատ երիտասարդ էր՝ «եկն առ նա թագաւորն Վանանդայ մանուկն Աբաս»)։ «Մանուկ» բառը նշանակում է ինչպես «երեխա», այնպես էլ «պատանի», «երիտասարդ» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 206)։ Աբասն այդ ժամանակ մանուկ չէր կարող լինել։ 984 թ. իշխանությունը ստանձնելու ժամանակ նա արդեն հասունացած երիտասարդ էր, Ասողիկի խոսքերով «յառաջ քան զթագաւորելն էր մանուկ փոյթ և կայտառ...։ Իսկ յորժամ եհաս նա յաթոռ թագաւորութեանն՝ երևեցաւ նա այր չքեղ, լի հանճարով և իմաստուն... և դարձաւ նա յայր այլ» (էջ 196)։ Այս տողերից երևում է, որ 984 թ. Աբասը արդեն դուրս էր եկել պատանեկան հասակից, իսկ մինչև 1000 թ. անցել էր 16 տարի, ուրեմն այդ թվականին նա արդեն միջին տարիքի կլիներ։ 1000 թ. պատանի կարող էր լինել Գագիկը, որը 990 թ. ընդամենը 6 տարեկան էր։

Մուշեղի թոռ Գագիկից հետո Կարսում իշխում է Գագիկ Ա շահնշահի (990—1020) երրորդ որդին՝ Աբասը։ Ինչպես նշում է Վարդան պատմիչը, «Ի չորեքհարիւր քառասուն և չորս թուին մեռաւ Գագիկ, տուեալ զթագաւորութիւնն երից որդւոց, Յովանիսի, Աբասայ և Աշոտոյ։ Զթագն տայ Յովանիսի, և գԱնի և զՇիրակ... և զայլ մնացեալսն՝ Աշոտի և Աբասայ բաժանէ։ ...և նստի (Աշոտը) թագաւոր Դրուց աշխարհին. և Աբաս ի Կարս»[10]։ Այս խոսքերից պարզվում է, որ Գագիկ Ա շահնշահը Հովհաննես-Սմբատից և Աշոտից բացի ուներ նաև Աբաս անունով որդի։ Վերջինս զարմանալի կերպով մնացել է երկու եղբայրների ստվերում, և պատմաբանները ուշադրություն չեն դարձրել, որ 1020 թ. նա է գրավել Կարսի գահը։ Այդ մասին վկայություն ունի նաև Ուռհայեցին. «Յայնմ ժամանակի նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ Հայոց արքային, և Գուրգէն՝ յԱղուանից աշխարհն (Տաշիր-Զորոփորում—Ռ. Մ.) վասն զի յազգէ Հայոց թագաւորացն էին և կային ի հնազանդութիւն տանն Շիրակայ»[11]։ Քանի որ Ուռհայեցու աշխատության երկու հրատարակված օրինակներում չի ասված, որ Աբասը Գագիկ շահնշահի որդին էր, հետազոտողները կարծել են, որ խոսքն այստեղ Մուշեղի որդի Աբասի մասին է։ Սակայն Ուռհայեցու ժամանակագրության ձեռագիր երկու օրինակներում նշված է, որ «Աբաս եղբայր էր Աշոտոյ և Յովհաննէս թագաւորի»[12]։ Այս Աբասին հիշատակում են նաև իր մայրը՝ Կատրամիդե թագուհին (Գագիկ Ա-ի կինը) Անիի Կաթողիկե եկեղեցու արձանագրություններից մեկում և Արշարունիքի եպիսկոպոս Անանիան՝ 1013 թ. Հոռոմոսի վանքի արձանագրության մեջ[13]։

Այսպիսով, Մուշեղի թոռ մանուկ Գագիկից հետո Կարսում գահակալում է Գագիկ շահնշահի որդի Աբասը, որը իշխում է 1020-ից (գուցե դեռ ավելի շուտ) մինչև 1049 թ.[14]։ Դրանով իսկ ընդհատվում է Մուշեղի շառավիղը և իշխանությունն անցնում է նոր շառավիղի՝ հանձինս Աբաս Բ Կարսեցու (1020—1049) և Գագիկ Բ Կարսեցու (1049—1065)։

Բերված տվյալները ցույց են տալիս, որ Կարսի թագավորներին չհաջողվեց իրենց թագավորական իշխանությունը դարձնել ժառանգական. հինգ թագավորներից երկուսի վերաբերյալ ունենք ուղղակի վկայություն շահնշահերի կողմից նշանակվելու մասին։ Ուռհայեցու վերը մեջբերված տողերից ակնհայտ երևում է, որ Կարսի և Կյուրիկյանների տոհմաճյուղերը հայոց շահնշահերի (Բագրատունյաց ազգապետի) վասալներն էին, նրանց անմիջական գերադասության տակ, և գահը գրավում էին իրենց ազգապետի հրամանով։ Դրանից բխում է մեկ այլ կարևոր հարց ևս. 1020 թ. սկսած Կարսի թագավորության հողերի գերագույն սեփականատերերը ովքեր էին՝ Կարսի թագավորնե՞րը, թե՞ Բագրատունի շահնշահերը։ Այդ առումով չի կարելի

---

10 Վարդան, էջ 92, «Սմբատայ սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 5։

11 Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 10։

12 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5587, էջ 258ա, № 6605, էջ 4ա։

13 «Դիվան հայ վիմագրության», պր. 1, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 35, Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 33, 68։

14 «Թագաւորք վերջինք Բագրատունիք» ժամանակագրության մեջ ասված է «ի ՆՂԸ (1049) մեռաւ Աբաս թագաւորն» («Մանր ժամանակագրություններ», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 502, «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», հրատարակության պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 14)։

ուշադրություն չդարձնել հետևյալ կարևոր հանգամանքի վրա։ XI դ. 20-ական թվականների սկզբին բյուզանդական կայսր Վասիլը կարողացավ Հայոց թագավոր Հովհաննես-Սմբատին ստիպել իր թագավորությունը կտակել Բյուզանդիային։ Կտակին նախորդել էին երկարատև բանակցություններ, որոնց ընթացքում, Ուռհայեցու վկայությամբ, Վասիլը պահանջում էր նաև Կարսը. «Ի թուականութեանս Հայոց ՆԼ (1021) ելանէր Վասիլն յարեւելս անթիւ զօրոք և խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի և զԿարս»[15]։ Այստեղ մեզ համար կարևորն այն է, որ Կարսը պահանջվում էր ոչ թե տեղական թագավորից, այլ Հովհաննես-Սմբատից։ Արդյոք դա չէ՞ր նշանակում, որ Կարսի թագավորության հողերի գերագույն սեփականատերերն էին Բագրատունի ազգապետերը (հայոց թագավորները)։ Մեր կարծիքով, այդ հաստատում են Ուռհայեցու վերը մեջբերված խոսքերը։ Սմբատ Սպարապետը, որը օգտվել է Ուռհայեցուց, մի փոքր այլ կերպ է հաղորդում նույն դեպքերի մասին և հետաքրքիր լրացում կատարում հարցի էությունը հասկանալու համար։ Նա գրում է, որ Անիի համար (այսինքն հայոց գահին տիրանալու համար) վիճող Հովհաննեսին և վերջինիս եղբորը՝ Աշոտին հաշտեցնում են Պահլավունիներն ու Բագրատունիները, պայմանով, որ Հովհաննեսը ստանա Անին, իսկ Աշոտը լինի թագավոր «Դրուց աշխարհին»։ Եղբոր մահից հետո նա պետք է դառնար «թագաւոր ամենայն Հայոց»։ «Եւ հաւանեալ Աշոտ՝ յայնժամ նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ հրամանաւ Յովհաննիսի եւ Աշոտոյ եւ Գեորգի[16]՝ յաշխարհն Աղուանից (Տաշիր-Զորափորում—Ռ. Մ.) զի էին յազգէ թագաւորաց. եւ կային ի հնազանդութեան երկուց թագաւորացն Յովհաննիսի եւ Աշոտոյ»[17]։ Այստեղ ուղղակի ասված է, որ Կարսի և Կյուրիկյան տիրակալները Բագրատունի ազգապետի (Հովհաննես-Սմբատի) և նրա եղբոր ստորադասն էին։ Դրանից հետո չպետք է զարմանալ, որ բյուզանդական կայսրը հողային հարցերով դիմում է անմիջականորեն Հովհաննեսին։

Վերը մեջբերված սկզբնաղբյուրների տվյալների համադրումը հիմք է տալիս եզրակացնելու, որ Բյուզանդիան Կարսի փաստական տերն էր համարում հայոց շահնշահին, այլ ոչ թե Վանանդի թագավորներին։ Բայց Հովհաննես-Սմբատի կտակը, այնուամենայնիվ, չտարածվեց Կարսի վրա. որը 1045 թ. կայսր Կոստանդին Մոնոմախի ձեռքը չանցավ։ Այդ փաստը շատ ուշագրավ է և պահանջում է հատուկ բացատրություն։ Ինչպե՞ս հնարավոր եղավ, հակառակ Վասիլի պահանջի, կտակում չընդգրկել Վանանդի թագավորությունը։ Այդ հարցին պատասխանելու համար հիշենք, որ 1020 թ., հոր մահվանից հետո, Աշոտ Դ-ին բաժին հասավ «Դրուց աշխարհ»-ը։ Արիստակես Լաստիվերտցին ճշտում է, որ Աշոտին անցավ «զներքին կողմն աշխարհին՝ որ հայի ի վերայ Պարսից և Վրաց»[18]։ Համադրելով պատմիչների կցկտուր տեղեկությունները, կարելի է եզրակացնել, որ «Դրուց աշխարհ»-ը կազմում էին Հայոց թագավորության այն գավառները, որոնք սահմանակից էին Վրաց թագավորությանը և արաբական ամիրայություններին։ Իսկ Վրաց թագավո-

15 Մատթեոս Ուռհայեցի, էջ 49։

16 Գեորգին՝ Ուռհայեցու մոտ նշված Գուրգենն էր։ Երկու պատմիչներն էլ շփոթել են. Լոռիում այդ ժամանակ իշխում էր Գուրգենի որդի Դավիթ Անհողինը։

17 Սմբատ Սպարապետ, էջ 6։

18 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ՝ Ղ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 27։

ությանը սահմանակից էին Կյուրիկյան և Կարսի թագավորությունները։ Ուրեմն, Աշոտի գերադասությանը (սյուզերենությանը) ենթակա էին նշված երկու հայկական թագավորությունները և ամիրայություններին հարող գավառները։ Նրանք էին կազմում «Դրուց աշխարհ»-ը և նրանց թվում, իհարկե, Աշոտի անձնական հողային կալվածքները։

Եթե ճիշտ է մեր եզրահանգումը «Դրուց աշխարհ»-ի տեղադրության վերաբերյալ, ապա այդ դեպքում Կյուրիկյանների և Կարսի թագավորների գերագույն սյուզերենը 1020—1040 թթ. ոչ թե Հովհաննես-Սմբատն էր, այլ Աշոտ Դ-ն։ Այդ պատճառով էլ նրանց հողերը Հովհաննեսի իրավասությունից դուրս էին, և նրա «կտակը» (Տրապիզոնի պայմանագիրը) չտարածվեց դրանց վրա։ Եթե այնուամենայնիվ Վասիլը Կարսը պահանջում էր Հովհաննես-Սմբատից, այլ ոչ Աշոտ Դ-ից, ապա դա, ըստ երևույթին, տեղի էր ունեցել մինչև եղբայրների հողային վեճերի լուծումը և նրանց տիրույթների բաշխումը։ Աղբյուրների ընձեռած նյութը առայժմ հնարավորություն չի տալիս ավելին ասելու։ Մնում է հուսալ, որ ապագայում նոր աղբյուրների ի հայտ գալու շնորհիվ կլուսաբանվի Կարսի թագավորության պատմության այդ հետաքրքիր և կարևոր դրվագը։

Այսպիսով, Վանանդ—Կարսի թագավորության շուրջը կատարած քննության արդյունքները մեզ համոզում են, որ նրա գավառները կազմեցին տեղական թագավորների ժառանգական սեփականությունը միայն սկզբնական շրջանում՝ առաջին և երկրորդ, ծայրահեղ դեպքում, մինչև երրորդ սերունդը՝ Մուշեղից մինչև Գագիկ Ա Կարսեցին։ Այնուհետև ուղիղ շառավիղը ընդհատվեց, իսկ դա նշանակում է, որ կազմալուծվեց Մուշեղի հիմնած ֆեոդալական տունը։ Շահնշահերը լուրջ պատճառներ պետք է ունենային վերացնելու Կարսի թագավորների ժառանգական իշխանությունը, ամենայն հավանականությամբ ֆեոդալական վերահաս բախումներից խուսափելու համար։ Պայքարը, որը ծավալվեց Շատիկ բերդի շուրջը, հաստատում է արքունիքի և Կարսի Բագրատունիների հողային վեճերի առկայության փաստը։ Ասողիկը գրում է, որ Սմբատ Բ-ն «սկսաւ ...գոռալ ընդ հօրեղբօր իւր Մուշեղայ որ ի Կարս. և առնու զբերդն որ ի Ճակատս, որում Շատիկն կոչեն»[19]։ Անկասկած այս վկայությունը արտացոլում է Բագրատունի ազգապետի և նրա տոհմակից վասալի միջև ծավալված ներֆեոդալական պայքարը։ Եվ պատահական չէ, որ դա հանգեցրել է Շատիկի բռնագրավմանը։ Դրանից հետևում է, որ այդ բերդը Կարսի տիրակալներին էր տրված պայմանական տիրության իրավունքով։ Մուշեղի՝ մեզ այժմ անհայտ հավակնությունները Սմբատին դրդեցին զրկել նրան այդ կարևոր ռազմական ամրությունից։ Չնայած այն շուտով վերադարձվեց, բայց հետագայում վերջնականապես խլվեց կարսեցիներից և XI դ. 20-ական թվականներին պատկանում էր Աշոտ Դ-ի վասալներից մեկին[20]։

Վեճերը շարունակվել են նաև հետագայում, և Գագիկ Ա-ն ստիպված է եղել կարսեցիներին, ավելի ճիշտ՝ Մուշեղյաններին զրկել իշխանությունից ու Կարսը հանձնել իր անմիջական ժառանգին։ Դրանով փաստորեն հիմք էր

---

19 Ասողիկ, էջ 188։

20 Արիստակես Լաստիվերտցի, էջ 27։

գրվում Բագրատունյաց նոր կրասեր ֆեոդալական տանը, որը պետք է արքունիքի հենարանը լիներ պետության հյուսիս-արևմտյան գավառներում։

Գագիկ Ա-ի պայքարը Մուշեղյանների դեմ, XI դ. առաջին քսանամյակում հայոց արքունիքի վարած կենտրոնաձիգ քաղաքականության ուշագրավ դրվագներից է։ Այն ցույց է տալիս, որ Գագիկը իր հոր նման ձգտում էր ամրացնել և կայունացնել պետության ծայրամասերի կապը արքունիքի հետ։ Հյուսիսային Հայաստանում Բագրատունյաց ոստանի խոշոր երկրամասերում՝ արևելյան Գուգարքում և Վանանդում (նրան հարող փոքր գավառներով) վարչական իշխանությունը հանձնվեց թագավորական ընտանիքի կրտսեր անդամներին՝ «արքունի տան գահերեցներին»։ Նրանց և արքունիքի միջև ժամանակի ընթացքում տեղի ունեցան բախումներ, որոնց հետևանքով Կյուրիկյանները կորցրեցին իրենց տիրույթների կեսը, բայց Գուգարքում գինաստիական ճյուղը չփոխվեց։ Հակառակ դրան Վանանդում տեղական թագավորների շառավիղը գինաստիական ամրողջություն չկազմեց՝ Բագրատունի մի կրտսեր ճյուղը փոխարինեց մյուսին։ Այդ տարբերությունը կախված էր ինչպես տեղական թագավորների հողատիրական իրավունքներից, այնպես էլ նրանց և արքունիքի փոխհարաբերությունների բնույթից։ Նշված հանգամանքը Բագրատունյաց թագավորության ներքին քաղաքական կյանքի կարևոր և հետաքրքիր կողմերից է և պահանջում է խոր ու համակողմանի ուսումնասիրություն։

БОРЬБА ГАГИКА I ПРОТИВ ФЕОДАЛЬНОГО ПАРТИКУЛЯРИЗМА

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

За время своего тридцатилетнего правления Багратидский царь Гагик I (990-1020) многое сделал для укрепления и централизации армянского государства. Важной стороной его внутренней политики является борьба против партикуляризма крупных феодалов — удельных царей. В 1001 г. он подавил выступление Кюрикидского царя Давида в восточном Гугарке, а в 1020 г. лишил Карсских Багратидов владетельных прав и назначил царем в Карсе своего сына Абаса (1020-1049).